# ОБЪЯВЛЕНИЕ

## об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 26 мая 2020 года в договор № DD-GHAPDzB-19/46-03, заключенный 26 декабря 2019 года в результате процедуры закупки под кодом DD-GHAPDzB-19/46 организованной с целью приобретения офисных материалов для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

**Причина возникновения изменения:** Договор заключен на основе части 6 статьи 15 закона РА <О закупках>, из количества, подлежащего поставке товара, установленного приглашением для 70 штук предоставлены финансовые средства..

**Описание изменения:** Приложение N 2 под заглавием <ГРАФИК ПЛАТЕЖЕЙ> утвержден в новой редакции.

**Обоснование изменения:** Пункты 8.5, 8.13 Контракта.

Заказчик: **Судебный департамент**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-03 պայմանագրում 2020 թվականի մայիսի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով սահմանված՝ ապրանքի մատակարարման ենթակա քանակից 70 հատի համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 26.12.2019թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-03» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«26» մայիսի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Աharonovի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 26.12.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-03» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17

Հ/Հ՝ 900011192151

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

---------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

***«Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ***

Հասցե՝ ք. Երևան, Եր. Քոչար 5

Հ/Հ՝ 2470100266530000

ՀՎՀՀ՝ 01556527

«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ռ. Ահարոնով

---------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելվ.
« 26 » մայիսի 2020թ. կնքված N 1 համաձայնագ.

(Հավելված N 2
« 26 » դեկտեմբերի 2019 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-03» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30192157/506 | Դրոշմակնիք | - | - | - | - | - | - | - | - | - | - | 12000 | 12000 |
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| 1 | 30192157/ 3 | Դրոշմակնիք | - | - | - | - | 84 000 | 84 000 | 84 000 | 84 000 | 84 000 | 84 000 | 84 000 | 84 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Եր. Քոչար 5
Հ/Հ՝ 2470100266530000
ՀՎՀՀ՝ 01556527
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ